Իշխանաբար կը պահանջէ Կատարինէ 'ի Շահան-Գերէյէ քրիստոնէից գաղթելու առաջարկութեան կատարումը. վատ խանը չէ համարձակիր մերժել կայսրուհւոյն առաջարկութիւնը: Այլ որովհետև քրիստոնէից ևս ինքնակամ յօժարութիւնն հարկաւոր կը լինի, կաշառք և այլ խաբեպատիր միջոցք 'ի գործ կը դրուին, իբր թէ պիտի գան այլազգիք քարոզքանդ անելու զՂրիմ, և բոլոր քրիստոնեայք ոտնակոխ պիտի լինին, եթէ չթողուն չելնեն Ղրիմէ: Ռուժեանցիւ իւր առաջարկութիւնը յաջողցնելու համար, քրիստոնէից հոգևոր առաջնորդքը կը շահի իւր կողմը. խոստանալով նոցա ամենայն ազատութիւն, միանգամայն մինչև ցմահ հաստատութիւն իրենց առաջնորդութեան պաշտամանց մէջ: Պատմութիւնը կը զրուցէ՝ որ Իգնատիոս Յունաց մետրապոլիտը մեծ համակրութեամբ կ'ընդունի Ռուժեանցեւի առաջարկութիւնը, Հայոց առաջնորդք՝ Պետրոս վարդապետ Մարկոսեան Լուսաւորչականաց և Տէր Յակոբ Վարդերեսեւիչ կաթոլիկացը՝ ծանր կը շարժին, անշուշտ հասկընալով գործոյն ծանրութիւնը, միանգամայն և ակնածելով իրենց հօտէն:

1778 ին, ապրիլի 23 ին Ս. Զատկին օրը, Պահչեսարայի (որ այն միջոց մայրաքաղաք էր Ղրիմու) Յունաց Աստուածածնայ վանքին եկեղեցւոյ մէջ՝ Իգնատիոս Մետրապոլիտ կ'առաջարկէ քրիստոնէից գաղթականութեան խնդիրը, չուտով կը տարածուի այն ձայնը թերակղզւոյն մէջ, առհասարակ քրիստոնեայք և ոչ քրիստոնեայք կ'ամբոխին ու կը չփոթին: Թէպէտ հասկնալով որ այդ Ռուսաց հնարքն է, կը բողոքեն խանին վատութեան դէմ. քրիստոնեայք՝ իրենց առաջնորդքը կաշառակուրծ